

մասանց բանին մասնաւորապէս ընձեռեցէ, եւ ըստ պահանջմանց պարագայից նոցին՝ շնորհիցէ զկանոնս եւ կարգաւորիցէ. ըստ որում եւ մերս այս ընձեռումս յառաջանայ» (ընդգծումը մերն է-Յ. Մ.)³²:

Յղճի մոռք պէտք է ասել, որ Սեբաստացին մեծ կարեւորութիւն է տուել շաւրահետեւեան, այն զիտեղով որպէս քերականութեան ինքնուրոյն մի բաժին, ուստի եւ նրան պատշաճ տեղ է յատկացրել:

Հեղինակը շարահետական համակարգի համար յօրինել է նոր եզրեր, արել է

լրացումներ եւ կատարել է ինքնուրոյն շատ զիտողութիւններ: Կարելի է ասել, որ հետազոտում, ինչպէս զբարարի, այնպէս էլ աշխարհարարի քերականութիւն կազմող զբեթէ բոլոր հեղինակները պարզապէս հիմք են ընդունել Սեբաստացու վերոյիշեալ երկասիրութիւնը:

(Շար. 3)

ՅԱԿՈԲ Մ. ՄԵԽԹԱՐԵԱՆ
(Դասախօս, Երեւան)

32. Մ. ՍԵԲԱՍՏԱՅԻ, նոյն տեղում, էջ 230-231:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Դասախօս Յակոբ Մ. Մեխթարեանի այս հմտալից ուսումնասիրութիւնը՝ Մեխթար Աբբաօր շարահետական ըմբռնումներու մասին, յանձնարարեալ քղբատարով ստացած ենք Երեւանէն, 1966 թուականի Յուլիսին, Սփիւռհայտութեան հետ Մշակութային կապի կոմիտէի մամուլի բաժնի վարչութեան կողմէ, առ ի հրատարակութիւն:

Հանդիմով այժմ կը ներկայացնենք զայն մեր ընթերցողներուն, յօդուածաշարի ձեւով, ուր ամփոփուած է յաջող վերլուծում մը Մեխթար Աբբաօր գրաբարի ընդարձակ քերականութեան, եւ գնահատանք՝ անոր խորունկ արժէքին:

Մեր անկեղծ շնորհակալութիւնը՝ Սփիւռհայտութեան հետ Մշկ. կապի կոմիտէի Պատուարժան վարչութեան եւ յօդուածաշարիս յարգելի Հեղինակին, նուաճող նուաճումներու ջերմ մաղրանքներով:

ԽՄԲ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆԸ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՅԻՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

ՆՊԱՍՏ ՄԸ


ՀԱՅ - ՀՈՒՆԳԱՐ ՊԱՏՄԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Կարողատեան հովիտին մէջ հաստատուած (896ին) հունդար ժողովուրդի ամբողջութեան եւ ազգային ապահովութեան մեծապէս նպաստեց՝ անոնց ազգայնական իշխանին մկրտութիւնը: Անիկա էր որ յաղթահարեց միւս ցեղապետները. իսկ իր որդին՝ Ս. Ստեփանոս թագաւորը (997-1038) սկսաւ կազմակերպել աւատապետական կառավարութիւնը: Պետութեան եւ ընկերային նոր կարգին կազմաւորումին համար՝ բաւական էջը ո'չ առաջնորդ ցեղին զերակշռութիւնը, ո'չ ալ Արեւմտաքի առաջնութիւնը ստացած զինուորական օղնութիւնը. հարկաւոր էր նաեւ քրիստոնեայ եկեղեցւոյ օժանդակութիւնը:

Եկեղեցւոյ առաքելական գործունէութեան հետ՝ ամէնուրեք սերտօրէն միացած է շինարարութիւնը, զեղարուեստը եւ ճարտարարուեստը: Հունդար ժողովուրդին դարձը, եկեղեցական կարգին կառուցումն ու գործունէութիւնը՝ Հունդար ժողովուրդին մէջ ալ զեղարուեստական ստեղծագործութիւններ արտադրեցին: Այսպէս, Սուրբ Ստեփանոս թագաւորին բարեկարգութիւնները ո'չ միայն ընկերային ու պատմական զարգացման տեսակէտով՝ յառաջադիմութեան հանդիմաններ հարուստ են, այլ նոյն իսկ ճարտարապետական զետեղի վրայ նուաճումներ կը նշեն: Նորակառոյց պետութեան զարգա-

ցումը, սակայն, միայն օտարազգիներու ազդեցութեան արդիւնք համարելու չենք. զանազան պահանջներու զոհացում տալու համար՝ ներքին ոյժերու գործադրութեան ալ զիմած են: Այս տեսակէտով՝ օրինակ կը ծառայէ, ըստ նորագոյն ուսումնասիրութեանց տուեալներուն՝, Feldebröi եւ Tarnaszentmáriaի եկեղեցիները:


Feldebröi եկեղեցին, շինուած ԺԱ. դարու առաջին կիսուն, քառակուսի յատակագիծ ունի եւ երեք կողմերը կիսաբոլոր կոպակներ (նկար՝ թ. 1): Արեւելեան կողմը, խորանին ներքեւ ստորերկրեայ եկեղեցի մը կայ, երկու նաւե-



Նկար թիւ 1

Feldebröi եկեղեցւոյ յատակագիծը

1. Dercsényi Dezső: A magyarországi művészet. Budapest, 1964.



Նկար քիւ 3
Rakamazli սկաւառակը

որ սասանեան տիրապետութենէն ազատուելով՝ միասին բերած ըլլալու է երբեմնի հայրենիքի ոսկերչութեան արուեստն ալ, որովհետեւ անոնց մէջէն ելած է kazar պետութեան ճարտարապետներու դասակարգը:

Արդարեւ, նոյն դարու հնութիւններու կարգին են Rakamazli սկաւառակը եւ Nagyszentmiklósի դանձը, որոնք կովկասեան ազդեցութիւն կը կրեն եւ ազուան ձեռագործներուն հետ կապակցութիւն կը մատնանշեն: Առաջինը կնոջական զգեստի վարդ մըն է, որուն վրայ արծիւ մը նկարուած է թեւատարած, բերանը՝ տերեւ, եւ ճիւղներուն մէջ՝ ջրալիւծ թռչուն մը բռնած (նկար՝ թ. 3): Երկրորդ հնութիւնը սեղանի վրայ դրուելիք ոսկեայ անօթ մըն է, որուն վրայ նկարուած է մարդ առեւանգող առեւանգուիտ անդր մը (նկար՝ թ. 4):

Որպէսզի կարենանք այս առարկաներու ծագումին մասին քննութիւն կատարել, նախ անհարկ մը տալու ենք հունգար ազգին սկզբնաւորութեան: Այս պատմութեան գլուխը շատ աւելի մթին է՝ քան Հայ ազգի ծագումին հարցը: Փրատոր ազգիւրները քիչ են, եւ լեզուարանական շատ մը սխալներով լի հետազոտութիւնը աւելի եւս կը կնճռուէ հնախոսական հետազոտութիւնները: Հունգար ժողովուրդի կովկասեան յարաբերութիւններուն մասին, իբր հիմ կ'առնենք Կոստանդին Ծիրանածին կայսրին հաղորդագրութիւն-

ներ. «Երբ Լեւոնիայի մէջ բնակող Թիւրքերուն եւ բեշենեօներուն միջեւ պատերազմ ծագեցաւ — կը դրէ — Թիւրքերը պարտուեցան եւ երկու մասի բաժնուեցան: Մէկ մասը Պարսկաստանի շրջանակին մէջ հաստատուեցաւ, եւ մինչեւ այսօր կը կրէ սաւարտիլ ասփալիլ անունը: Իսկ միւս մասը Արեւմտք գնաց՝ Երեւելիք կոչուած տեղը: ... Վերոյիշեալ Թիւրքերու ցեղին, որ գնաց դէպի Արեւելք ու հաստատուեցաւ Պարսկաստանի կողմերը, Արեւմտք բնակող Թիւրքերը՝ մինչեւ այսօր ալ՝ գետաբնակներ կը դրկեն եւ կ'այցելեն անոնց»⁹:

Ինչպէս հունգարական պատմութեան միւս ազգիւրները, Կոստանդին կայսրին այս վկայութիւնն ալ զանազան կերպով կը մեկնաբանուի պատմագիրներու կողմէ: Այլ եւ այլ են կարծիքները Պարսկաստանի շրջանակ եւ սաւարտիլ ասփալիլ յորջորջումներուն նշանակութեան մասին: Ոմանք կը համարին Կուր գետին մօտերը եղած ըլլալ անոնց հայրենիքը, ուր մինչեւ ԺԳ. դարուն սկիզբը մնացած ըլլան եւ ապա ձուլուած մոնղոլներու հետ, որոնցմէ յարձակում կրած են 1219-1225ի առեւանգները, եւ հուսկ «մայարաւ» անունով ճանչցուած են: Հունգար այս ցեղը

9. László Gyula: A nagyszentmiklósi kincsről. Folia Archaeologica. 1957, 141-152 old.

10. Konstantin Porphyrogenita: A birodalom kormányzása. Budapest. 1950, 171-3 old.

Հայոց քով «սեւորդի» անունով կը յիշուի¹¹:

Ուսումնասէրներէն շատեր Քուրմա գետին մօտ կը գետեղեն այս հողամասը, Կովկասի հիւսիսային շրջանակին մէջ, այն տեղերը՝ ուր հունգարական անուն կրող քաղաքներու աւերակներ կը գրանուին¹²:

Ուսումնասէրներէն շատեր Կուրմա գետնոց բնակավայրը, եւ կը նոյնացնեն Պաշքիւրիային հետ: Այս կարծիքին հետեւորդները՝ հիւսիսէն իջած կը նկատեն «սաքիւրները» ու բնակած Կովկասեան լեռներուն մէջ¹³:


Ուրիշներ՝ «սաքիւրները» Պարթեւներու յաջորդներ կը համարին, պարսկական հալածանքներու ժամանակ՝ դադրած եւ անուանին փոխած¹⁴:

Շատեր կը հաւատան, որ «սաքիւրները» խառնուած ըլլան Հոններուն հետ, եւ 500էն ի վեր, իբր Հոններ, կ'երեւին պատմութեան մէջ¹⁵:

Արեւելեան ազգիւրներուն աւելի կարեւորութիւն տուող ուսումնասէրները, Պարթեւներու նախնիքը Հիթիթներուն մէջ կ'որոնեն, Ազուանիստանը կը համարին հունգար հին հայրենիքը, եւ Պարթեւներու շառաւիղ կը համարին Հունգարացիները¹⁶:

Կուրմայի գետեղերէի Հունգարները՝ Մոլնար Խորենացիի վերագրուած աշխարհագրութեան մէջ կը յիշատակուին 460ի առեւանգները, երբ կը հաղորդէ թէ Կովկասի լեռներուն ստորոտը կը բնակէին «Գուլամակար» (Kum-magyar): Ասիկա է հունգարացի ժողովուրդին անունն առաջին յիշատակումը¹⁷:

Կուրմա գետի եզերքին շինուած հունգար քաղաքները հիմնադրուած կործանած են 1396ին՝ Լենկ-Թիմուրի բանակներէն, եւ քաղաքներու բնակիչները Կովկաս ապաստանած են: Ուսումնասէրները — ոչ միայն հունգարացիները, այլ նաեւ Փրանսացիներն ու գերմանացիները — ինգուսներու, չերքեզներու, կարարդներու, հիւսիսային օսեթներու, արխաղներու, անդեաններու, դիգոր ժողովուրդ-



Նկար քիւ 4
Nagyszentmiklósի ոսկեղէն սափորը

ներու մէջ գտած են հունգարական տարրեր¹⁸:

Իրերամերձ կենակցութեան հետեւանքով առաջ եկած կապակցութիւններէն զատ, ուրիշ ազգիւրներ եւս կը վկայեն հայ եկեղեցական կապերու մասին՝ հունգար ժողովուրդին հետ: Հոս յիշենք մագ-ֆուրներէ, այսինքն՝ Հոններէն նահատակ-

11. Molnár Erik: Magyarország története. Budapest, 1964. I. köt. 33 old.
12. Zichy Jenő: A magyar faj vándorlása. Budapest, 1897. I. köt. XXVI. old. Kuun Géza: Relationum Hungarorum cum oriente. Századok, 1893, 788 old.
13. Molnár: id. mü 32 old.
14. Jerney János: Keleti utazása. Pest, 1851, II. köt. 244 old.
15. Jerney: id. mü 242 old.
16. Horvát István: Rajzolatok a magyar nemzet legrégibb történetéből. Pest, 1825, 14 és 63 old.
17. Bendefy László: Gyeretyán országa. Budapest, 1942, 22 old.
18. Bendefy: id. mü 284-7 old.

ուած Գրիգորիս եպիսկոպոսը, որուն մահը, Փաւստոս Բիւզանդի համաձայն, կատարուած է Աղուաններու երկրին մէջ¹⁹։ «Սաբիր» ժողովուրդը երբ «կուտուգուր» ժողովուրդին մէջ ձուլուեցաւ, անոր Քիւրտ անունով առաջնորդը, որ 619ին մկրտուեցաւ՝ յոյն եւ հայ քահանաներու ձեռքով, արդիւնաւոր դործ կատարեց՝ զարձի բերելով իր ազգը՝ Լեպետիայի մէջ²⁰։

Մատնանշած մեր յարաբերութիւններու հիման վրայ՝ հաւանական կարելի է նշել, որ հունդարացիներու կերտած հայոձ եկեղեցիները, ո՛չ թէ կարարներու եւ աղուաններու դժով կրցած են կառուցանել, այլ իրենց իսկ վաղեմի կովկասեան հայրենիքին մէջ՝ հայութեան հետ, հայոց եկեղեցւոյ հետ ունեցած ուղղակի յարաբերութիւններուն շնորհիւ. այդ ճարտարապետութեամբ են շինուած հայկական ճարտարապետութեան ոճով բարձրացած շէնքերը, անոնց յատակադրիւնները եւ ոսկերչական առարկաները։

Թէպէտ յօդուածիս հետ ուղղակի կապ չունի, բայց յիշելով հունդարական յարաբերութիւնները հայ ազգին հետ, չեմ կրնար զանց ընել երկու իրողութիւններ, որոնցմէ հետեւանք հանել չեն կրցած հունդարացի գիտնականները։

1) Jerney János առաջինն ըլլալով՝ հաղորդած է Cseles Marton Յիսուսեան կրօնաւորին օրագրութիւնները, որոնք նախ վատիկանեան գիւանին մէջ էին, ու հիմա Պուտափէշտի Համալսարանի հաւաքածոյին մէջ կը գտնուին. հոն, կ'ըսուի թէ 1695ի Ապրիլ 8ին՝ խօսած է հայ վանականի մը հետ, որուն անունն էր Յովսէփ, որ կ'ըսէր թէ Թիւրքերուն քով լսած է Փոքր Հունդարիոյ եւ Մեծ Հունդարիոյ մասին, որոնցմէ մին Օրթո Մաքար, իսկ միւսը՝ Նիկար Մաքար կը կոչուէին²¹։

2) Այս տեղեկութեան շուրջ, կը գրէ Bendefy László, թէ երկու անունները ո՛չ թէ քաղաք՝ այլ ժողովուրդ կը նշանակեն. այն ատեն ուշագրաւ կը դառնայ Նեճիպ Ասիմին ըսածը՝ թէ «Մաճար ցե-

ղի պատկանող վրանարնակ հովիւները կը բնակին Թիւրքիոյ եւ Պարսկաստանի սահմաններուն վրայ։ Լեզուին հին թրքական բարբառ մըն է, քիւրտ եւ պարսիկ բառերով խառն։ Տակաւին կան մաճարներ Պիթլիսի եւ Վանի, ինչպէս նաեւ Սեբաստիոյ գաւառին մէջ։ Այս մաճարներուն մէջ՝ կան մեծ եւ փոքր կոչուած մաճարներ²²։

Այս երկու տեղեկութիւնները կ'ապացուցանեն որ տակաւին Ժէ. դարուն հունդարացիներ կ'ապրէին Հայաստանի եւ Քիւրտիստանի մէջ։ Ուրեմն, տարակոյս չի մնար որ հունդար եւ հայ ժողովուրդները միասին բնակած ըլլան, եւ անոր հետեւանքով՝ մշակութային փոխազդեցութիւններ առաջ եկած ըլլան։

Գործնական գետնի վրայ, ինչ որ հունդար ժողովուրդը Արեւելքէն հետը միասին բերած էր, բնականաբար՝ բաւարար պիտի չըլլար ժամանակի ընթացքին առաջ եկած կարիքներու հանդէպ։ Երիտասարդ հունդար եկեղեցին հարկադրուած էր արտասահմանէն ալ օժանդակութիւն ստանալ. նախ եւ առաջ այն երկրներէն, ուրկէ իր քարոզիչները կու գային։

Հունդարական եկեղեցին ուղղակի չը կապուեցաւ դարուն ազդեցիկ Clunyի կեդրոնին հետ։ Իր քարոզիչները Իտալիայէն եկան։ Հռոմի Ս. Ալեքսիանոս վանքին անանուն կրօնաւորները, Վենետիկի S. Gerardo Աբբան եւ չեխ բենեդիկտեանները եղան այդ առաջին քարոզիչները։

Արպաղ թաղաւորական հարստութեան առաջին շրջանին՝ հունդար եկեղեցիները եռանաւան էին, եւ պազիլիկ տիպար եկեղեցիներու խումբին կը պատկանէին։

19. Chorenei Mózes: Nagyörményország története. Szamosujvár 1892, 203 old. Հմմտ. Փաւստ. Բուգ. Գ. գլ. 9. (տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1933, էջ 25-26)։

20. Bendefy László: Kummagaria. Budapest, 1941, 32 old.

21. Jerney: id. mü 302 old.

22. Bendefy: Gyereyán 410-11 old.


եկեղեցիներու կառուցուածքը դադարաւորական եւ հիւսիսային Իտալիոյ եկեղեցիները կը յիշեցնէ, եւ յատկօրէն կը զատուի բիւզանդական եկեղեցիներու ոճէն, կամ Փրանսական ու դերմանական եկեղեցիներու յօրինուածքէն։ Այս տիպարը ամէնէն աւելի հաւատարմօրէն, զիւրաւ վերակազմելի ձեւով պահած է Pécsի մայր եկեղեցին (նկար՝ թ. 5, 6)։ Դեռ Ժ.Բ. դարուն մէջ ալ, բազմաթիւ, եւ քիչ թէ շատ փէշի եկեղեցիին նախատիպարին վրայ կառուցուած վանական եկեղեցիներու յատակադրիւններ կը դրանէին։

Այստեղ, հեղինակը լայնօրէն կ'անդրադառնայ իտալական ճարտարապետութեան ազդեցութեան վրայ, ինչ որ նիւթէն թեթեւ խոտորում նկատելով՝ թարգմանած չենք։

Հունդարական ճարտարապետութեան պատմութիւնը քննելով, անկարելի չի թուիր մեզի այն հետեւանքին յանդերձ, որ զոյութիւն ունեցած ըլլայ իտալացած հայ զաւուր մը, մանաւանդ Փաւլայի մէջ, ու անհետացած՝ հիւսիսային Իտալիոյ հին եկեղեցիներուն հետ։ Գիտենք որ Միլանի մէջ արդէն ԺԱ. դարուն, հայ զաւուր եկեղեցի մը ունեցած է²³. եւ նկատելով հայ ճարտարապետութիւնը իր «ազգային» արուեստ, իրաւացիօրէն կրնամ ենթադրել, որ Միլանի քարակոփները՝ զաւթական հայերէն առած ըլլան հայկական ոճը, եւ կրնայ ըլլալ որ Հունդարիա հաստատուած Միլանցիներու մէջ ալ հայեր եղած ըլլան։

Փէշի արհեստանոցը ամբողջական դըպրոց մը հիմնած է Հունդարիոյ մէջ. եւ եթէ ուղինք մեկնել թէ ինչո՞ւ այնքան շուտով տարածուեցաւ անոր ազդեցութիւնը, նկատելու ենք որ հայ եւ վրացական տարրերու բարեփոխուած ձեւերը՝ հնուց իրրեւ ծանօթ տարրեր ընդունուած էին հունդար ժողովուրդի կողմէ։

Փէշի մոնիֆիկը եւ ոճը, ոչ միայն չինարարական ուրուագիծերուն մէջ, այլ նաեւ մայր եկեղեցիներու զարդանկարներուն մէջ ալ գտած է ընդունելութիւն։




Նկար Բիւ 5
Pécsի եկեղեցւոյն ներքինամասնորը

Հունդարական առաջին ձեռագիրներուն մէջ ալ այս զարդանկարչութիւնը որդեգրուած է։ Հոս յիշատակելու ենք «Ձատարի» կոչուած Աստուածաշունչը, զոր աւստրիացի քննադատները սխալմամբ կը դասուորեն Սալցպուրկի զարդանկարչութեան կարգին. անոր մանրանկարները զիտելով, սակայն, մենք հոն փէշի լոմպարտական ճարտարապետներու զարդերուն կը հանդիպինք²⁴։

Ոսկերչութեան մարդին մէջ, այդ չըրջանին կը տարածուի զիւրաւորաբար ցանցակերպ զարդարուեստը, որուն արտադրած արծաթաթել կամ ոսկեթել զարդերը ստէպ կը համապատասխանեն փէշի որմնադարձերուն. օրինակ, Կղեմէս թագաւորին դերեզմանէն դուրս եկած մականը, Սուրբ Լատիսլաւոսի մասնատուփին վերին զարդերը։ Լոմպարտական զարդերը երեւան կու գան նաեւ զգեստներ-

23. Hovhannesián Eghia: Armenia népe. Gödöllő, 1934.

24. Dercsényi: id. mü 48 old.



Նկար քիւ 6

Pécsի ներքնամատրան խոյակը

րու, թափծու կամ կոփածոյ զարդերու վրայ ալ:

Եզրակացնելով, կրնանք հետեւցնել՝ որ ժ.Բ. դարու ընթացքին, ճարտարապետութեան եւ գեղարուեստի մէջ միաձեւ ոճ մը կազմուեցաւ, որուն Փէշի ոմ անունը կու տան, որովհետեւ այդ վայրին մէջ յատկապէս յայտնուած է: Ասոր ծաւալողները հիւսիսային խալիպները եղած են, իսկ իրենց ծաղումը Վրաստանէն եւ Հայաստանէն եղած է:

Բիւզանդիոնէն եկած ազդեցութեան մէջ գեո ազդեցութեամբ է՝ հայկական տարրը: Բիւզանդական արուեստին ազդեցութիւնը ամէնէն աւելի Esztergomի եկեղեցիները կը կրեն, նկատի չառած Արապի հարստութեան տակն չինուած յունական եկեղեցիները: Esztergomի մայր եկեղեցւոյն գլխաւոր դրան ոճը, նոյնպէս ծաւալած է Հունգարիոյ մէջ: Ուշագրութեան արժանի կէտ է անոր մէկ զարդը, որ կը ներկայացնէ Պելա Գ. չինարար թագաւորը (1172-1196), որ կը նուիրէ Հունգարիան Սուրբ Աստուածածնի. առիկա առաջին ներկայացումն է «Մարիամու Թագաւորութեան» Regnum Maria-num գաղափարին:

Գիտենք որ Մանուէլ կայսրը, իրեն իր յաջորդը մեծցուցած է Պելա Գ. թագաւորը:

ըր. րայց գիտենք նաեւ որ միայն Esztergomի մէջ կար հայկական գաղութ մը ու հայկական եկեղեցի, որ թաթարներու արշաւանքով կործանուած է: Տակաւին ծանօթ չենք գաղութին կեանքի մասին, եւ ասոր համար՝ չենք գիտեր թէ անոր ազդեցութիւնը ինչ չափով եղած է հունգար գեղարուեստին վրայ: Ամէն պարագայի, ստույգ իրականութիւն է, որ Պելա Գ. թագաւորին կերպարանաւորած եկեղեցին եւ նաեւ չինուած են ո՛չ թէ բիւզանդական, այլ ասորական եկեղեցիներու ձեւին վրայ:

Յիշելու ենք գեո Vértesszentkereszt վանքն ալ, որ Արեւելքէն ստացած է իր յատուկ — եռատեղեւ ձեւով — խորանին կերտուածքը: Չի գիտցուիր, սակայն, թէ այս ոճը եկեղեցաշէն Չաֆ Նիկողոսին յոյն կնոջ վերադրելու է, թէ այն միւս իրողութեան, որուն համաձայն՝ Չաֆ ազգին անդամները մասնակցած են Անդրէաս Բ. թագաւորին խաչակրութեան, որ իր վերադարձի ճամբուն վրայ, անցած է Կիլիկիոյ հայկական թագաւորութեան հողամասէն:

Հունգարներու Հայոց հետ ունեցած բազմակի յարաբերութիւններու եւ կապակցութիւններու մէջէն, մեր նկարագրութեան մէջ, հարաւորէն նշեցինք այն կէտերը, որոնցմով հայկական գեղարուեստը՝ երկատարով քրիստոնէայ հունգարացիներու վրայ տարածած է իր ազդեցութիւնը, եւ որուն շնորհիւ՝ հայկական ոճը զարգարեր է հունգար ժողովուրդին աստուածային պաշտամունքի վայրերը, եւ իրենց ազգային թագաւորներուն շիրմները:

Պուտափեշտ

ՏՈՄՈՆԻՔՈՇ ԲՈՐՊՈՒԼԻ

(Թրգմն. Հ. Ղուկաս Ֆոկուեան)

ԱՆՏԻՊ ԷԶԵՐ ՉԱՐՄԱՀԱԼԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐԻՑ ԵՒ ՍՐԱՄՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

(Շար. տե'ս «Բազմալեզու» 1967, ք. 6-8, էջ 154)

29. Մուկն եւ իր կիներ

Մուկն մէ օր թար էր նուազում, կնիկն էլ յանգաջ էր դնում: Բայց մուկն զայլմբ ընկել էր թարի կոթիցն ու ձեռն ժամ էր տալիս. կնիկը ասաց. «Օտար նուազողները իրանց ձեռները թարի վրայ ցած ու վիրեւ են անում, համա դու ձեռք մէ տեղ ընկել ես ու պահել: Մուկն պատասխանեց. «Նրանք ման են դալիս տեղը ճարեն. էտուր հմար է, համա ես ճարել եմ ու դալիմ ընկել»:

30. Երկու դասնգեր

Երկու դասնգեր մեծացել ին. մէկն վաճառական էր դարձի, միւսն եպիսկոպոս: Մէ քանի տարուց յետոյ՝ վաճառական հնգերն էկաւ էն քաղաքը, ուր իրա եպիսկոպոս հնգերը ծխական էր: Մէ օր վաճառականը իր ձին տարաւ ջրելու: Ետ գալուս վանքի դռան քովով յանցնելուս միտն էկաւ եպիսկոպոսը: — «Էաւ է մէ մտնեմ վանք, տեսնեմ հոգեւոր ախպէրս ինչ է անում»: Եպիսկոպոսը աշխրքի չափ խնդաց, երբ տեսաւ իր հնգերին ու ասաւ. «Շնորակալ եմ որ չես մոռացի ինձ»: Վաճառականը պատասխանեց. «Վալլահ ձիւ ծարաւ էր, տարայ ջուր տալու. ասի՝ հիմա որ կստեղծի յանց եմ կենում, մէկ էլ քեզի գլուխ քաղեմ»: Եպիսկոպոսն ասաց. «Բաս ես պիտի ձիւցդ շնորակալ լինեմ, ո՛չ թէ քեզից»:

31. Գէշ (տգեղ) մարդը եւ սիրուն կինը

Մէ գէշ մարթ, մօտ քառսուն տարեկան, աշխարային սիրուց կարօտ էր մը:

նացի. ոչ մէ կնիկ իրան չէր սիրել: Օրերուց մի օր քուչովն անցնելիս, մէ շատ սիրուն կնիկ գուշար էլաւ ու սկսեց քաղցր խօսքեր ասել. էս բանը մարթուն շատ զարմացրեց. կինը ասաց. «Ժամանակ ունես դաս մեր տունը, հետդ գործ ունեմ»: Գէշ մարթը պատասխանեց. «Հա՛, կու դամ հալբաթ, կու դամ»: Տիկինը միամիդ մարթուն տարաւ տուն եւ նստեցրեց օթախում ու ասաց. «Նստէ հէնց հիմի ետ եմ դալիս»: Խեղճ մարթը խնդաց, որ էսպէս բախտը բացուեց: Դեռ էսէնց մտքերի մէջ սուղուած էր, որ Խիկինը մէ 5-6 տարեկան աղջկայ ձեռքից ընծած էկաւ նի (ներս): — «Աղջիկս, սրբան տեսնում ես, միտդ պահէ թէ մէ անգամ էլ ցէթել ես, խտուր կ'օսեմ քեզի ուտի»: Աղջիկն վախից ընկաւ մօր խրտիտն: Տիկինը մէ էրկու ուրա տուեց էդ գէշ մարթուն ու ճամփու դրեց...»:

32. Շախրազն ու առքարը

Մէ անգամ Շահրազն քաղ անէլուս, առքարն էկաւ ու տեսաւ շունը իրա մօտ պտուած է. առքարը ձայն տուեց. «Շահրա՛զ, հնգերդ ո՛ւր է մօղտ պառկի»: — «Վալլահ, պատասխան տուեց Շահրազը, — էս է ինչ անեմ, առքար, մարթ է, քնել է. դու խօս գիտես դրանց հալը...»:

33. Մովսէս դային

Մէ մարթ Մովսէս դայուն հարցրեց. «Ախպէ՛ր, անումդ ինչ է». նա պատասխանեց. «Մօ, մօ, մօ, մօսէս»: Մարթն ասաց. «Ձանում, իմ անումն էլ Մօսէս է, բա ո՛ւր էտանք էրգար չէ...»: